ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2023 թվականի N 417 -Ա

«ՈՐՈՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՐ ԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետը և «Որոտանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշիկ Ստեփանյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

1. «Որոտանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշիկ Ստեփանյանին 2023 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 30-ը ներառյալ տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Որոտանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի դասվար Անուշ Գևորգյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2023թ.հոկտեմբերի 23
ք. Կապան